**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

թիվ 03- 54

«24» մարտի 2011թ

Լոռու մարզպետ

պարոն Ա. Քոչարյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու թիվ 6-9 որոշումները:

Թումանյանի քաղաքապետ / Լ. Զավարյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«18» մարտի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 6

## ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ՝ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Ք. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 14-րդ և 15-րդ կետերի, Լոռու մարզպետի 01.03.2011թ. թիվ 201/107.3.2/951-11 գր. և առաջնորդվելով «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և ՀՀ կառավարության 26.12.2002թ. թիվ 54 արձանագրության 7-րդ կետով.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան քաղաքի թիվ 2 մանկապարտեզը վերակազմակերպել «ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատության»՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2.ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրում և վերլուծության վարչությունում կատարել համապատասխան գրանցում:

3.Համաձայնություն տալ՝ ոչ առևտրային կազմակերպության՝ Թումանյան քաղաքի մանկապարտեզի տնօրեն աշխատելու Հայկանուշ Գագոյի Աղամյանին:

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|
| Ռամազյան Անահիտ Հովհաննեսի | | | |
| Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի | | | |
| Մարության Միհրան Շաքարի | | | |
| Շահվերդյան Սեյրան Սուրիկի | | | |
| Խեչոյան Մերուժան Ռուզվելտի | | | |

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«18» մարտի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 7

# ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ձորագէտի «Թուֆենկյան» հյուրանոցի տնօրինության գրությունը՝ իրենց աղբահանությունը մեր կողմից կազմակերպման մասին.

Ձորագէտի «Թուֆենկյան» հյուրանոցի տնօրինության հետ կնքել պայմանագիր՝ համայնքի աղբատար մեքենայով նրանց աղբահանությունը կազմակերպելու և Թումանյան համայնքի աղբավայր տեղափոխելու համար:

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | | | Կողմ-4 | Դեմ-1 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|---|---|
| Ռամազյան | Անահիտ | Հովհաննեսի | [signature] | | |
| Արզումանյան | Աշխեն | Աշխարհբեկի | [signature] | | |
| Մարության | Միհրան | Շաքարի | [signature] | | |
| Շահվերդյան | Սեյրան | Սուրիկի | [signature] | | |
| Խեչոյան | Մերուժան | Ռուզվելտի | | [signature] | |

Թումանյանի քաղաքապետ [signature] /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«18» մարտի 2011թ. Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 8

# ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, հաշվի առնելով Թումանյան համայնքում փոքր և միջին բիզնեսի զարգացման խնդիրները՝ արտադրական կառույցների շինարարության համար հողի նպատակային նշանակության փոփոխության համար.

1.Հավանություն տալ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու նախագծին՝ համաձայն կից հատակագծի, համայնքի սեփականություն հադիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.078 հա գյուղատնտեսական այլ հողատեսք, /չմշակվող/ ծածկագիր 050-001 արտադրական կառույցների շինարարության համար արդյունաբերական հողերի կատեգորիա փոխադրելու առաջարկությանը:

2.Բնակավայրի հողերից /ծածկագիր՝ 028-001-002/ 0.3 հա փոխադրել էներգտիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

3.Դիմել ՀՀ Լոռու մարզպետարան՝ հողերի կատեգորիայի փոփոխության առաջարկությունը ՀՀ կառավարության քննարկման ներկայացնելու համար:

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|
| Ռամազյան Անահիտ Հովհաննեսի | [signature] | | |
| Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի | [signature] | | |
| Մարության Միհրան Շաքարի | [signature] | | |
| Շահվերդյան Սեյրան Սուրիկի | [signature] | | |
| Խեչոյան Մերուժան Ռուզվելտի | [signature] | | |

Թումանյանի քաղաքապետ՝ [signature] /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«18» մարտի 2011թ. Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 9

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. փետրվարի 4-ի «Թումանյան համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 1-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Հովհաննես Պարանյանի, Հրաչիկ Մայիլյանի և Թումանյան քաղաքի թեքվանդոյի մարզիչ, ժամանակավոր բնակիչ Սասուն Եգանյանի դիմումները.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպատակներ բյուջեից /հոդված 4729/ Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն.

1)Պարանյան Հովհաննես- 30000դրամ
2)Մայիլյան Հրաչիկ -20000 դրամ
3)Եգանյան Սասուն -20000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Անգին Ծատինյանին լիազորել՝ Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|
| Ռամազյան Անահիտ Հովհաննեսի | | | |
| Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի | | | |
| Սարուքյան Միհրան Շաքարի | | | |
| Շահվերդյան Սեյրան Սուրիկի | | | |
| Խեչոյան Մերուժան Ռուզվելտի | | | |

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/